

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՅԻԻ ՔԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Հանգուցեալ Մեսրոպ Վրդ. Մախուսեանց «Բանասեր»ի մէջ հրատարակելու համար Թաբրիզէն ղրկած եր ինձ ընդօրինակութիւնները Ներսէս Աշտարակեցիի քսան կոնդակներուն, որոնք գրուած են 1850 Հոկտ. 10էն մինչեւ 1856 Սեպտ. 8: Ասոցմէ երեք հասր հրատարակած են իմ «Բանասեր»իս էրդ (1905) եւ Ըրդ (1906) հաստրներուն մէջ: Իսկ մնացեալները՝ 1908ին քերքիս դադրելովը՝ լոյս չեն տեսած: Արդ, զանոնք հրատարակութեան կուտամ այսօր «Սիոն»ի միջոցաւ:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

է
Ներսէս
Եպիսկոպոսապետ
եւ Կաթողիկոս
ամ. Հայոց
ՌՄՂՐ = 1843

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամոքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս անանայն Հայոց Մայրապոյն Պատրիարք հաւազգական-նախանձար արքայոյ արարածն մայր եկեղեցւոյ արքայ կաթողիկէ եղնիւնս:

Շնորհունակ Սահակ եպոս. վիճակաւոր ամ. հայոց Ատրպատական աշխարհի երկոքին գրութք. ձեր ի 17 ապրիլի, հմր. 19, եւ 30 նորին ամսոյ հմր. 23 եւ ի մայիսի 7, հասին առ մեզ, որոց զառաջինն ընթերցեալ զարմացոք, թէ վրա՞րդ իսկոյն ընդ մտանելդ ի Դաւիթ քաղաք կարողացայք ջատագովել զայր ո՛չ փորձեալ գործովք, առ որ այն ինչ մեր մտադիր էաք յիշեցուցանել ձեզ զգրեալն. որ վաղվադկոտ է ի հաւատալ թեթեամիտ է եւ փոքրկասցի: Եղև զի ձեր երրորդ գրութիւն ընթերցաք լցեալ ձերով ապաշաւանօք վասն ձեր ջատագովելոյն այնպէս զայր անձանթ ձեզ, սակայն այսպիսի առանց լաւագոյն խորհրդածութեամբ անկշռադատ գրութիւնք ամենեւին չկարեն լինիլ վասն գրողին. զի ամենայն գրութիւնք ոչ միայն ըստ իմաստիցն այլ թէ ըստ ամենայն բարոյն պարտին լինիլ միշտ նախահոգ խորհրդածութեամբ. իսկ այս գրութիւնք ձեր եթէ ունիցին անկանել յունկնս նոցա, որոց անուանք զրեցեալք են, լինելոց են

վասն ձեր անկարկատելի պատառուած վերանորոգութեանց բարեկամութեան կօնստիւն Ռուսաց ընդ ձեզ. զի վասն միոյ անպատիւ բառի մեղացանեն զմիմեանս բազմաթիւ եւրոպայիք: Ըստ որոյ գրեմ ձեր արբազնութեան թէ՛ ի խօսիլդ եւ թէ՛ ի զրելդ մոռացիս ամենեւին զտղորականն ձեր մինչեւ ցայժմ արձակ համարձակ բանիւք կամ բառիւք խօսիլ կամ գրել ընդ մեծի կամ ընդ փոքրու. զի մեծամեծ վրնասուց այնոքիկ են սկզբունք: Այլ հետեւելով բանից իմաստնոյն թէ Պատասխանի ողոք զարձուցանէ զբարկութիւն. բան խիստ յարուցանէ զարտմտութիւն: Ըստ որոյ թէ ընդ բարեկամոց թէ ընդ թշնամեաց ողոք բանիւք խօսակցութիւնն է հօրեղ առիթ զովմանի յառաջադիմութեանց ամենայն գործոց մարդկան. ըստ որոյ կրկին եւ վերստին պատուիրեմ ունելով ի նպատակի մտաց ձերոց զմեր պատուիրան՝ ի բաց մոռանալ մինչ իսպառ զեղանակ սովորական խօսակցութեանց ձերոց եւ գրութեանց, եւ ոչ բնաւ լինիլ վաղվադուկ առ որպիսի եւ իցէ գործս ձեր եւ ոչ բնաւ արտաբերել զբան խիստ ընդ որոց եւ իցէ, մեծաց կամ փոքրոց, զի առաջին թըշնամութեանց ծնօղ եւ մայր են վաղվադկոտութիւնք եւ բանք խիստք: Օրինակ ունիցիս քեզ զկանոնաւոր ներգործութիւնսն

բնութեանց, զի ամենայն պատգը հասու-
նակին ի ժամանակի իւրաքանչիւրոյ և ա-
մենայն ծնողք յառաջ քան զժամանակն
իւրաքանչիւրոյ ոչ կարողանան ծնանել:
Նման նոցին լի՛ր միշտ արժանապատ, իէ
վասն իւրաքանչիւր զործոց մտադրութիւնք
վազմողելով ո՛չ երբեք զօրեն յառաջանալ
ի նպատակ իւրեանց կատարելութեանն.
այլ լաւագոյն ջանիւք և անխռն աշխա-
տութեամբ ընկալցին իւրաքանչիւրն զիւ-
րեանց կատարելութիւնն ըստ յաջողելոյ
ժամանակին վասն իւրաքանչիւրոյ:

Զբանձնելն յեղ զկայսն Նիկողայոս
հանգուցեալ եպիսկոպոսի՝ ի դուր է համա-
րեն անպատուութիւն ձեզ. զի օրէնք կա-
նոնաւոր կառավարութեանց ամենայն սահ-
մանաւորեալ աւերութեանց այնպէս են ա-
ռանց յատուկ աեղեկութեանց որպիսոքար
անօրէնութեանց իսկական աւանդ որոց
պատկանին որպիսի և ինչ զործք ընդդէմ
կանոնաւորեալ օրինաց համարի աննշինչ
ըստ կամոյ. ըստ որոյ կօնսուին սոքայ
որ ոչ խառնի ի գործս ինչ հայկազանց
եթէ խառնեցեալ է ի կառավարութեանց
կայսից Նիկողայոս եպիսկոպոսի՝ վասն այն
է խառնեցեալ, զի հանգուցեալ Նիկողայոս
եպիսկոպոսն ծանուցեալ է զործավար պա-
տրիարք կաթողիկոսի Էջմիածնի և պատ-
կանեալ պաշտպանութեանց կայսերութեան
ամենայն Ռուսաց, ում գտանի ինքն զոր-
ծավար ի Դաւրէժ քաղաքի վասն պաշտ-
պանութեան պատկանեցելոցն իւրօրինակա-
սերութեան, որպէս և է Աթոն Էջմիածնի
և ծայրագոյն պատրիարքն և ամենայն
պատկանեալքն սոցին:

Մեք չունելով ծանօթութիւն վասն
նախանձեալ որպիսութեանց ի մասին կրն-
քելոյ զկայսն հանգուցեալ Նիկողայոս և
պիսկոպոսի՝ չեմք ևս ունեցեալ առ այն
գտնօրէնութիւն ինչ աւելի քան զայն, որ
ըստ արժանադատութեանց Սինօզի գրե-
ցաք ընդ ձեզ, առ Աղայ Առաքելն Մելիք
Մինասեան կամ առ հասարակութիւնն ևս,
զի ի ներկայութեան Թաղղէոս եպիսկոպոսի
և երեւելաց ի ժողովրդեանն բարեք հե-
տադօտութեամբ, վերահասու եղեալ և առ-
մարագրեալ զամենայն զմնացորդսն յետ
վաղձանի հանգուցեալ Նիկողայոս եպիս-
կոպոսի՝ արասցեն որպէս և գրեցեալն է

ինքեանց: Բայց զի այդպէս է եղեալ, զի
աւելի կօնսուին Ռուսաց խառն է գտանեցեալ
ի պաշտպանութիւն մնացորդացն յետ վաղ-
ձանի նորա, մեք անձանօթ գտով այնմ՝
չեմք ունեցեալ գտնօրէնութիւն ի մասին
այնմիկ. և այժմ ևս զարձեալ գտանիմք
անձանօթ, ըստ որոյ ի դալ Առաքել Աղա-
յին սեղեկացեալ որպիսութեանցն՝ անօ-
րինեացութեան արպէս արժան գտակ լինիցի
և դուք այժմ հոգ կալցութեան ձեր ա-
ռաջնորդական կատարելութեանցն և վասն
սրբազան Թաղղէոս վանից հարկաւորացն
տալ զկանոնաւոր ընթացս և այնպէս օր
ըստ օրէ ըստ յաջողելոյն ձեզ հոգ ունիլ
վասն բարեկարգելոյ զվանքն և զեկեղեցին
ըստ յաջողելոյ Աստուծոյ:

Առանց կանոնաւոր խորհրդածութեան
և մանաւանդ առանց նախ յայանելոյ մեզ
վասն որոց և ինչ զործոց արժան գտակ-
լոց ձեռք խօսիլ կամ գրել կօնսուլի Ռու-
սաց մի՛ բնաւ արժան համարեալք, զի
զուք անձանօթ էք ամենին եղանակի կա-
ռավարութեանց ընդ կանոնաւորեալ աղ-
ղաց և անհամաձայն նոցուն բանք ձեր
կամ գրութիւնք աւերին առաւել քան շի-
նեն զգործան ձեր, որպէս և այժմ առա-
քել առ ձեզ աւանդ կօնսուլի Ռուսաց զայն
բան յաղագս պահանջելոյ ձեր ի Յովսէփ
խանէն՝ յոյժ մեծ պակասումն է ներգոր-
ծեալ զրութեանց նորուն ընդ ձեզ մինչև
ցոյն պատահումն և եթէ միւսանդամ ևս
ունիցի այնպիսի ինչ առաջանալ, այնու-
հետեւ առելութիւն ևս ունի ապաւորիլ ի
միտս նորա, որ ոչ կարի համարիլ վասն
ձեր շահաւէտ իմն. ողջ լի՛ր, և յամենայն
գործս ձեր լի՛ր միշտ զգոյշ, զգոյշ և զգոյշ
ի բաց մոռացեալ զստիւրականն մինչև ցոյ-
ժեմ. յոմի 1851 և աղղականն 1300, և
մայիսի 17, ի սր. Էջմիածին:

հմր. 146

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀՅՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

(4)

